ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԵՐԱՌՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Մ. Ա. Միքայելյան

Երևանի պետական համալսարանի անձի հոգեբանության ամբիոնի ասիստենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդիկ, հասարակական խնամակալություն, աշխատանոցներ, ուսուցում, դաստիարակություն:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց նկատմամբ ներկայումս վարվող քաղաքականությունը վերջին դարերի ընթացքում հասարակական զարգացման արդյունք է: Որպես կանոն, այդ քաղաքականությունը կյանքի ընդհանուր պայմանների արտացոլումն է և պայմանավորված է հասարակության տնտեսական, քաղաքական, բարոյական, հոգևոր զարգացման մակարդակով, լուսավորության, առողջապահության, գիտության և մշակույթի վիճակով: Հասարակության զարգացման հետ մեկտեղ փոխվել է ոչ միայն վերաբերմունքը զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց նկատմամբ, այլև մարդկային թերարժեքության չափանիշները: Փոխվել են նաև այն եզրույթները, որոնցով կոչում, ավելի ճիշտ, պիտակում էին այդ մարդկանց. խեղանդամ, արատավոր, անկարող անվանումների փոխարեն ներկայումս կիրառվում են զարգացման առանձնահատկություններ ունեցող, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) որակումները:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդիկ Հայաստանում ժողովրդի և պետության ուշադրությանն են արժանացել դեռևս հնագույն դարերում: Պատմությունից հայտնի է, որ Արշակ Երկրորդի թագավորության շրջանում՝ մոտավորապես 354 թ., Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ Աշտիշատում տեղի ունեցավ առաջին եկեղեցական օրենսդիր ժողովը, որին հոգևորականներից բացի մասնակցում էին նաև նախարարները և խոշոր իշխանները: Ժողովը որոշումներ ընդունեց ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ կյանքի և հասարակական հարաբերությունների խնդիրների վերաբերյալ: Որոշվեց բոլոր գավառներում բացել դպրոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, աշխատանոցներ [5, էջ 21]: Հաստատությունները ստեղծվեցին վանքերին կից, և Ներսես կաթողիկոսն անձամբ զբաղվում էր դրանցով:

Միքայել Չամչյանի հավաստմամբ՝ հիմնարկությունների բացման պատճառներից մեկն այն էր, որ հաշմանդամ մարդիկ հայտնվել էին անխնամ վիճակում և, մատնված լինելով աղքատության, գողություն և անկարգություններ էին անում:

Ներսես Մեծի բարեգործությունները ոգևորությամբ է նկարագրում Լեոն. «Դպրոցներից ավելի Ներսեսն ուշադրություն դարձրեց այնպիսի հասարակական հիմնարկությունների վրա, որոնք կենդանի օրինակով մարմնավորում էին գթասրտության, մարդասիրության սկզբունքները՝ ստեղծելով միաժամանակ մեղմություն բարքերի մեջ, հավաքական գործակցություն, հանրային պարտավորությունների գիտակցություն... Արևելքում այսպիսի վերաբերմունքը կատարյալ հրաշք պետք էր համարել: Հիվանդ, հաշմանդամ մարդիկ հին աշխարհում մատնված էին արհամարհանքի, վտարված էին մարդկային հասարակությունից և ապրում էին հեռու ու խուլ անկյուններում՝ իբրև անասուններ: Ներսեսն այս տեսակ թշվառների համար խնամատարություն հաստատեց առանձին հիմնարկությունների մեջ և այդպիսով հանդես հանեց մի լայնասիրտ մարդասիրություն, որ ամենաբարերար ազդեցություն պիտի թողներ ասիական կոպիտ ու դաժան բարքերի վրա... Արշակը Ներսեսի հետ էր այս ձեռնարկությունների մեջ: Ուրիշ կերպ չէր կարելի երևակայել պետական օժանդակություն այնքան լայն չափերով» [2, էջ 451-452]:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող անձանց նկատմամբ բարեգութ վերաբերմունքը դարձավ ավանդական ու շարունակվեց հետագա դարաշրջաններում: Պետական և եկեղեցական նշանավոր գործիչները, ինչպես, օրինակ, Արցախի Վաչագան Բարեպաշտ թագավորը, Եսայի Հասան Զալալյան իշխանը և այլք շարունակեցին Ներսես Մեծի ծավալած գործունեությունը և ամրագրեցին այդ ավանդույթները: Անկարողների և աղքատների նկատմամբ ողորմածությունը տարածված էր նաև հասարակ բնակչության մեջ:

Հայաստանում զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց իրավունքներն օրենսդրական մակարդակով ամրագրվեցին XII-XIII դարերում՝ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ում, որտեղ առանձին հոդված կա՝ «Հաշմանդամ երեխաների մասին» (հոդված 98): Այնտեղ նշվում է, որ եթե երեխան հաշմանդամ է և բանականությունից զուրկ, նա չի կարող ժառանգորդ լինել, քանի որ չի իմանա, թե ինչպես պետք է վարվի ժառանգության հետ:

Եթե հիվանդությունը բուժելի է, ապա երեխան ապաքինվելուց հետո կարող է ժառանգություն ստանալ, հակառակ պարագայում՝ նրանք, ովքեր ժառանգություն են ստանալու, պարտավոր են հիվանդի ամբողջ կյանքի ընթացքում խնամել նրան: Միևնույն ժամանակ, եթե երեխաները կաղ, կույր, կաթվածահար կամ բորոտ են, սակայն բանականություն ունեն, այսինքն՝ նրանց հիվանդությունն այնպիսին է, որ եթե իրենց խնամեն, նրանք ի վիճակի կլինեն ունեցվածք ժառանգել, նրանք չպետք է զրկվեն ժառանգելու իրավունքից: Մ. Գոշը հոդվածն ավարտում է հետևյալ խոսքերով. «Թող մարմնով և հոգով մաքուրնե՞րը նվիրվեն Աստծուն և նրա ժառանգները լինեն, սակայն մարդիկ թող չհրաժարվեն նաև իրենց այն ժառանգներից, որոնք արատ ունեն» [7, էջ 202]:

Հայ այլ եկեղեցական կանոններում և դատաստանագրքերում ևս քննարկվել են ֆիզիկական ու մտավոր թերություններով երեխաների խնամքի, բուժման, կրթության և աշխատանքի նախապատրաստման հարցերը:

IV դարում բացված հիմնարկությունները Հայաստանի համար խաղաղ տարիներին ընդարձակվել են, իսկ պատերազմական տարիներին՝ կրճատվել հանրակրթական դպրոցների հետ մեկտեղ: Կարծում ենք, եթե հիմնարկներն իրենց գոյությունը չպահպանեին մինչև Մ. Գոշի ժամանակները, անհրաժեշտ չէր լինի հատուկ հոդված հատկացնել: Դպրոցների և բարեգործական հիմնարկությունների մասին տեղեկություններ կան նաև Առաքել Դավրիժեցու, Զաքարիա սարկավագի և Գրիգոր Դարանաղցու աշխատություններում, որոնք նկարագրում են XVI-XVII դարերի դեպքերը: Սերովբե Վիչենյանի, Գրիգոր Զոհրապի և այլոց գեղարվեստական և գիտամանկավարժական աշխատություններում տեղեկություններ կան, որ XVIII-XIX դարերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար գործել են հայկական գիշերօթիկ դպրոցներ [5, էջ 250]:

Կույրերի, խուլերի և մտավոր խնդիրներ ունեցողների համար կազմակերպված հիմնարկություններում հիմնականում եղել են դպրոցահասակ երեխաներ, ովքեր պատերազմում զոհված ու անապահով ընտանիքների հիվանդ զավակներ էին: Մեծահասակ հաշմանդամները որոշ սահմանափակումներով ունեցել են ընտանիք կազմելու և աշխատանքի իրավունք, ուստի նրանք հասարակական հիմնարկություններում ապրելու կարիք չունեին:

Վերոհիշյալ հիմնարկությունները պատմական աղբյուրներում կոչվում են աշխատանոցներ: Կարելի է ենթադրել, որ երեխաներն այնտեղ պարապության չէին մատնված: Նրանք աշխատում էին և հարկ վճարում զբաղեցրած հողատարածությունների ու վաճառքից ստացված եկամուտների համար: Այդ հիմնարկությունների կազմակերպիչները գիտակցել են, որ զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաներին անհրաժեշտ է հասարակական արտադրության մեջ ընդգրկել: Տեղեկություններ կան, որ հիմնարկներում ապրող մարդիկ նաև գրել, կարդալ են սովորել:

Խոսելով Հին Հայաստանում զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների խնամակալության մասին՝ չպետք է կարծել, որ դա համատարած բնույթ է կրել: Անդամալույծներն ու կույրերը հաճախ զբաղվել են մուրացկանությամբ, նրանցով

լիքն են եղել եկեղեցիների բակերը, իսկ քիչ թե շատ աշխատունակներն օրինիբուն ծառայել են ունևորների տներում:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների կրթության ու դաստիարակության հարցերը քննարկել են XVIII-XIX դարերի հայազգի ճանաչված մանկավարժները, բժիշկները, գրողները: 1844թ. Պոլսում հրատարակվում է բժիշկ, մանկավարժ Սերովբե Վիչենյանի «Մանկատածութիւն որ բնական բարոյական և իմացական հրահանգ խնամատարութեան մարդկանց» գիրքը: Աշխատության մեջ Ս. Վիչենյանն իր ժամանակի համար խիստ առաջադեմ մտքեր է արծարծում. նա քննարկում է զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների կրթության հարցերը և ապացուցում, որ նրանք էլ կարող են մի բան սովորել և իրենց հացն աշխատանքով վաստակել: Ս. Վիչենյանը շարադրում է մտավոր և ֆիզիկական թերությունների պատճառները, դրանց կանխարգելման և փոխհատուցման հնարավորությունները: Հեղինակը նշում է, որ եթե մարդն ի ծնե կույր է, ապա նրա մյուս զգայարանները խիստ դյուրազգաց են դառնում:

Արժեքավոր են Ս. Վիչենյանի մտքերը մտավոր հետամնացության մասին. նա հիմնավորում է մտավոր հետամնացների կրթության անհրաժեշտությունը և ապուշներին արհեստ սովորեցնելու կարևորությունը՝ նշելով, որ ապուշը խելքից բոլորովին զուրկ չէ, և նրան ինչ-որ բան սովորեցնել՝ նշանակում է նրա թերությունը պակասեցնել: Հեղինակը գրում է. «...անոթիին հաց և ծարավին ջուր տալը միայն՝ բարեգործութիւն չի սեպվիր. ասկե ավելի բարեգործութիւնը և ողորմութիւնը իր հացն ու ջուրը ինքը գտնալը մեկուն սորվեցնելն է» [4, էջ 256]: Կարծում ենք, այս մտքերն այսօր էլ արդիական են:

1850թ. Պոլսում հրատարակվում է բժիշկ Անդրեաս Փափովիչի «Արուեստ երկայնակեցութեան» աշխատությունը, որտեղ շարադրված են ժառանգական հիվանդությունների դեմ պայքարի, ինչպես նաև կենսական այլ հարցերի կարգավորման նշանակությունն առողջ, երջանիկ և երկար կյանք ունենալու համար:

1874թ. Թիֆլիսում լույս է տեսնում Առաքել Բահաթրյանի «Համրերի և կույրերի ուսումնարանների մասին» հոդվածը:

XIX դարի կեսերից աշխուժանում է հայ մանկավարժական միտքը: Պարբերական մամուլը մանկավարժության խնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներ է տպագրում: Դրանց մեջ քիչ չեն և այնպիսի հարցերը, որոնք անմիջականորեն առնչվում են զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաներին և նրանց ուսուցմանը: Առողջապահության, կրթության և դաստիարակության հարցերին անդրադարձել են «Հյուսիսափայլ» (Մոսկվա), «Բազմավեպ» (Վենետիկ), «Արձագանք» (Թիֆլիս), «Արարատ» (Էջմիածին) ամսագրերն ու թերթերը: Քննարկումներն ավելի բուռն են եղել մասնագիտական հանդեսներում՝ «Մանկավարժական թերթ», «Վարժարան» (Թիֆլիս), «Առողջապահական թերթ» (Երևան), «Առաջնորդ առողջապահության» (Պոլիս), «Դպրոց» (Վաղարշապատ) և այլն:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների հոգեկանի ձևավորման, կրթության և դաստիարակության հարցերի շուրջ հոդվածներ են գրել Ս. Մանդինյա-

նը, Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Հ. Հարությունյանը, Տ. Ռաշմաճյանը, Հ. Ալամդարյանը, Մ. Թաղիադյանը, Ա. Բահաթրյանը և հայազգի այլ մանկավարժներ, բժիշկներ, գրողներ:

Հատուկ մանկավարժության մի քանի հարցեր շոշափել է Միքայել Նալբանդյանը: Նա խոսում է վնասված զգայարանների գործառույթների փոխհատուցման մասին: Մ. Նալբանդյանն ընդգծում է, որ փոխհատուցման հետևանքով կույր մարդու լսողությունը ճանաչողական ավելի մեծ հնարավորություններ է ստանում, քան խուլ մարդու տեսողությունը:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների հոգեբանությանը և դաստիարակությանը վերաբերող հոդվածներով հանդես է եկել Ղազարոս Աղայանը: Նա հոգեբանական տեսանկյունից շատ կարևոր եզրահանգում է կատարել: Ղ. Աղայանը նշում է, որ ժողովրդի կարծիքով կույրին Աստված կուրացրել է նրա չարության համար կամ եթե մեկն ինչոր արատ ունի, դա Աստված է նրան տվել՝ իբրև նշան, որ մարդիկ տեսնելով՝ զգուշանան նրանից: Սակայն հասարակության նման կարծիքները զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխային դարձնում են կասկածամիտ, չարամիտ, ոխակալ: Այնուհետև Ղ. Աղայանն ավելացնում է. «Չէ՞ որ կույրին եթե խուլ ասես, նա չի ցավիլ այնքան, բայց եթե ասես կույր, նա կհամարի, թե դանակով նորա աչքը հանեցիր: Եթե լսողը նախապաշարված չլիներ, նա յուր մարմնական արատությանց վերա ծիծաղելը բանի տեղ չէր դնիլ» [1, էջ 66-67]: Վերջում նա եզրակացնում է. «Եթե մարդկային ցեղի մեջ թշվառություն չլիներ և ոչ կարեկցության զգացմունք կլիներ» [1, էջ 68]:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների դաստիարակության համար կարևոր է Ղ. Աղայանի դատողությունն այն մասին, որ կրթելուց ու դաստիարակելուց առաջ ուսուցիչը պետք է ճանաչի իր սանի հոգեկան առանձնահատկությունները:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց հասարակության մեջ ներգրավելու հիմնախնդիրը ներկայումս Հայաստանի հանրապետության կողմից վարվող քաղաքականության առաջնահերթություններից է: Վերջին տասնամյակներին նրանց նկատմամբ հասարակական վերաբերմունքի մեջ էական փոփոխություններ են արձանագրվել: Կարծում ենք, դրա պատճառները մի քանիսն են: Նախ, 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո կտրուկ ավելացավ զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց քանակը, և նրանք հասարակության մեջ ներառվելու կարիք ունեին: Ակնհայտ էր, որ այդ մարդիկ պետք է հասարակության լիիրավ անդամ լինեն՝ ունենալով հավասար իրավունքներ և, որ շատ կարևոր է, նաև հնարավորինս հավասար պարտականություններ:

Զարգացման առանձնահատկություններ ունեցող անձանց պաշտպանության հիմքը 1993թ. ընդունված ՀՀ օրենքն է “Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին”: ՀՀ պաշտոնական կերպով ճանաչում է զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց բոլոր իրավունքները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի “Հաշմանդամների իրավունքների մասին” (1994) հռչակագրում [8]:

2005թ. Հայաստանում օրենք ընդունվեց կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող անձանց ներառական կրթության իրականացման մասին: Գործընթացը պետական աջակցություն ստացավ՝ ի դեմս ՀՀ գիտության և կրթության նախարարության: Ներկայումս մայրաքաղաքի և մարզերի ավելի քան 100 դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն: Ենթադրվում է, որ մինչև 2022թ. Հայաստանի բոլոր դպրոցները պետք է ներառական լինեն [6]:

Վերջին տարիներին զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների ներառման հիմնահարցերը քննարկվում են բազմաթիվ պարբերականներում ("Բանբեր Երևանի համալսարանի", "Մանկավարժական միտք", "Ընտանիք և դպրոց", "Մարդ և հասարակություն", "Հատուկ կրթության հիմնահարցեր") և տարաբնույթ գիտաժողովներում:

Հայաստանում գործում են հասարակական կազմակերպություններ (օրինակ, "Հույսի կամուրջ" կազմակերպությունը), որոնք զբաղվում են զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց հիմնախնդիրներով: Զանգվածային լրատվամիջոցները ևս ներդրում ունեն և հաճախ են լուսաբանում զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց հիմնահարցերը: Այս ամենի արդյունքում ներկայումս Հայաստանի հասարակությունը հոգեբանորեն ավելի պատրաստ է զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց հասարակության մեջ ներառելու գործընթացին:

Այսպիսով, հայ իրականության մեջ զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց համար առաջին խնամակալական հաստատությունները բացվել են IV դարում և երկար ժամանակ գոյատևել են: Մյուս կողմից, եկեղեցական և աշխարհիկ ժողովների ընդունած կանոնները, հայոց դատաստանագրքերի հոդվածները վկայում են, որ հին և միջին դարերում ֆիզիկական ու մտավոր թերություններով անձինք չեն ճանաչվել իբրև իրավահավասար քաղաքացիներ: Այդուհանդերձ, առաջադիմական ենք համարում Հայաստանում պետության և եկեղեցու կողմից այդ երեխաներին անվճար ուսուցում տալու, միջնադարում աշխատանքային ուսուցում կազմակերպելու գաղափարները, աշխատանքը դաստիարակության միջոց ճանաչելը և, ամենակարևորը, ժողովրդի բարեգութ վերաբերմունքը նրանց նկատմամբ: Կարծում ենք, որ վերջինիս վրա ազդել է նաև կրոնի խորը ներթափանցումը հայ ազգի կյանքի և կենցաղի մեջ, ինչը նույնպես զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների նկատմամբ վերաբերմունքին տվել է մարդասիրական ուղղվածություն:

Ներկայացնելով հասարակության դիրքորոշումները զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց նկատմամբ՝ մենք առանձնացնում ենք վերաբերմունքի 4 ձևեր, որոնք գերակշռել են պատմության ընթացքում՝

1. Անհանդուրժողական-քամահրական վերաբերմունք, որի հիմքում ընկած է զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց հասարակությունից մեկուսացնելու միտումը. նրանց նկատմամբ վերաբերմունքն անհանդուժողական էր հասարակության զարգացման վաղ փուլերում, ինչը պայմանավորված էր արտադրական ուժերի, մշակույթի, բարոյական և հոգևոր արժեքների ցածր մակարդակով,

2. Հանդուրժողական վերա-

բերմունք, երբ զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդիկ գտնվել են հասարակական խնամակալության ներքո, ընդ որում, ֆիզիկական թերության պարագայում հանդուրժողականությունն ավելի մեծ է եղել, քան մտավոր թերության դեպքում,

3. Բարեհոգի վերաբերմունք, որը մի շարք դեպքերում հանգել է խղճահարության,

4. Ինտեգրատիվ-ներառական վերաբերմունք, երբ հասարակությունն ընդունում է զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց, փորձում զարգացնել նրանց ընդունակություններն ու գիտակցում, որ նրանք հասարակության մեջ լիարժեք և հնարավորինս ինքնուրույն կյանքով ապրելու իրավունք ունեն: Հենց այս մոտեցումն է, որ ներկայումս մեծ տարածում է գտնում ամբողջ աշխարհում:

Գրականություն

1. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, 4 հատորով: Խմբ. կոլ.՝ Ա. Ասատրյան, Ա. Ինճիկյան, Ս. Սարգսյան: Հտ. 4: Երևան, 1962:
2. Լեո, Երկերի ժողովածու, 10 հատորով: Խմբ. կոլ.՝ Զ. Գրիգորյան, Հ. Թամրազյան, Է. Թոփչյան և ուրիշներ: Հտ. 1: Երևան, 1960:
3. «Մենք երբեք չենք հրաժարվի հասարակությունում հավասար մասնակցության մեր պահանջից»: Զեռնարկը նվիրված է Հայաստանի սպինալ հաշմանդամների հիմնախնդիրներին: Երևան, 1999:
4. Մինասյան Ա. Մ., Անոմալ երեխաների ուսուցումը և դաստիարակությունը Հայաստանում: Երևան, 1973:
5. Մինասյան Ա. Մ., Դեֆեկտոլոգիայի հիմունքներ: Ուս. ձեռնարկ մանկավարժ. բուհերի համար: Երևան, 1980:
6. Տիգրանյան Ն., Ներառական կրթության մեթոդաբանությունը, տեսությունն ու պրակտիկան Հայաստանում: “Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները” գիտաժողովի նյութեր: Երևան, 2014, էջ 41-48:
7. Армянский судебник Мхитара Гоша. Отв. ред. Л. С. Хачикян. Перевод с древнеармянского А. А. Паповяна. Ереван, 1954.
8. Стандартные правила обеспечения равных возможностей для инвалидов. Организация Объединенных Наций. Нью-Йорк, 1994.

ИСТОРИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ИНКЛЮЗИИ ЛЮДЕЙ С ОСОБЕННОСТЯМИ РАЗВИТИЯ В АРМЯНСКОМ ОБЩЕСТВЕ

М. А. Микаелян

ассистент кафедры психологии личности Ереванского государственного университета, кандидат психологических наук

В статье представлена динамика исторически образовавшегося отношения к людям с особенностями развития в армянском обществе. Выделены четыре вида установок, которые преобладали в течении столетий: нетерпимо-пренебрежительное отношение, терпимое отношение, доброжелательное отношение, интегративно-инклюзивное отношение.

Historical preconditions of inclusion of people with disabilities in the Armenian society

M. A. Mikaelian

Assistant at the Chair of Personality psychology
Yerevan State University, Candidate of Psychological Sciences

The article displays the dynamics of the historically developed attitude towards people with disabilities in the Armenian society. Four types of settings, that had prevailed for centuries, are highlighted: intolerant-contemptuous attitude, tolerance, good-natured attitude, integrative-inclusive attitude.